# „ՄՈՒՐՃ"-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

---

ՂԶԼԱՐ. Ղզլարցուն։ Որպէս առանձին տպելիք—չենք ընդունում, բայց նա հարկաւոր կը գայ, երբ կը զբաղուենք հայկական ուսուցիչների դրութեան խնդրով։ Այն ժամանակ Ձեր «Անձնազոհ վարժապետ» ոտանաւորը իւր տեղը կարող է ունենալ։

ԲԱՔՈՒ. պ. Կ.-ին։ «Աքսորւածի զաւակը» կը տպւի պատեհ ժամանակին։

ԱՂՍՏԱՖԱ. պ. Աբէլ Ալբեսեանցին։ Ստացանք հասցէի փոփոխութեան համար 5 հատ 7 կոպէկանոց մարկա։ Մի հատը աւելորդ էր, և գրեցինք իբր մուտք՝ փոխատու-խնայողական գանձարանի մատեանում։

«ՄՈՒՐՃ»-ի վէպերը։—Այս համարում վերջանում է Պերճ Պռօշեանցի «Ցեցեր» վէպը և այսօր էլ նա մտնում է գրավաճառանոցը, որպէս առանձին վէպ, հրատարակութիւն «Մուրճ» ամսագրի։ Մեր ամսագրի առաջին հրատարակութիւնն է այդ։ «Ցեցեր» վէպը, որպէս առանձին գիրք, տպւած է մաքուր և սպիտակ թղթի վերայ, ծաւալը փոքրացրած է մինչ 5 քառակուսի տողի երկարութիւն, մինչդեռ «Մուրճ»-ինն է 6½ քառակուսի, երեսի տողերի թիւն է 27, մինչդեռ «Մուրճ»-ինն է 34. այդպիսով «Ցեցեր» վէպը կազմում է 336 երեսից բաղկացած բաւականին վայելուչ մի հատոր և վաճառւում է 1 րուբլով՝ յօգուտ հեղինակի։ Այդ հրատարակութիւնը ընկնում է հեղինակի 30-ամեայ յոբելեանի տարին։ Ներկայ համարով սկսւում է տպագրւել մի դեռ ևս անյայտ հեղինակ պ. Սարգիս Առաքելեանի մեծ ռոմանը՝ «Խև Կարապետ»։ Ենթադրաբար, այդ ռոմանը ունենալու է 260 «Մուրճ»-ի երեսներ, այնպէս որ աւելի մեծ է լինելու, քան «Ցեցերը»։ Կարելիին չափ արագ վերջացնելու համար, այս և հետևեալ համարներում կը տանք այդ ռոմանից աւելի մեծ-մեծ կտորներ, քան մինչ այժմ սովոր էինք անելու։ Այդպիսով նաև ընտանիքները, որոնք հեշտ ընթերցանութեան նիւթ են պահանջում, կը ստանան իրանց բաւականութիւնը։ Այժմ, երբ ամառւայ

չոքերն են սկսում, մենք կ՚աշխատենք, որքան կարելի է, ընթերցողների այդ պահանջը լրացնելու։

Պ. Ատրպետեանի ռոմանից զատ՝ զուգընթացաբար պիտի տանք շուտով պ. Լէօի յատկապէս «Մուրճ»-ի համար գրած «Կորածներ» վերնագրով վէպիկը, չը խօսած արդէն «Պատրիկեանի Նամակների» մասին, որոնց բնաւորութեան հետ մեր ընթերցողները բաւականին ծանօթացած պիտի լինին։ Այդ «Նամակները» ներկայացնում են իրարից բոլորովին անկախ պատկերներ, հասարակական, բայց արդէն միայն ինտելլիգենցեայի, այն էլ՝ գործիչ անձերի տիպարներ։ Այդ «Նամակները» կը տպուին նաև ապագայում։

Բացի այդ բոլորից, սպասում են իրանց ժամանակին արդէն բոլորովին պատրաստ տիկին Մ. Խ. «Նինա» և պ. Լէօի «Գործիչ» մեծ ռոմանները. մէկը՝ բարձր շրջանների կեանքից, միւսը՝ գաւառական կեանքից։ Մենք կարծում ենք, որ «Նինա»-ն կարող պիտի լինենք սկսել տպագրելու հոկտեմբեր կամ նոյեմբեր ամսից։

ԻԶՄԻՐ. պ. Ս. Սիմրիսարեանին։ Բոլոր Տաճկա-հայերից Դուք առաջինն էք գրած «Մուրճ» ամսագրին, որ ասել է թէ՝ Դուք առ այժմ միակ տաճկա-հայ բաժանորդն էք։ Փառք և պատիւ տաճկահայերին։

ԲԱՔՈՒ. պ. Աւ. Դաւթեանցին։ Ստացանք Ձեզնից և պ. Ան. Քալանթարից 6 ր. 25 կոպ. նուէրը յօգուտ «Մուրճ»-ի փոխատու-խնայողական գանձարանի։ Ընդունեցէք մեր շնորհակալութիւնները։

ԱԳՈՒԼԻՍ. պ. Ղազարեանցին։ Ձեր գրածքը յետ տւինք պ. Մկրտչեանին։ Այդ նիւթի մասին ստացուած են շատ աւելի ընդարձակ և հեղինակաւոր գրածներ, բայց մնացին անտիպ։ Նորութիւն չը կայ մէջը։

ԲԱՔՈՒԻ Մարդասիրական Ընկերութեան 25-ամեայ յոբելեանին «Մուրճ»-ի խմբագրութիւնը, յանձին խմբագրի, ուղարկեց հետևեալ հեռագիրը։ — Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան։ Խմբագրութիւնը «Մուրճ» ամսագրի յղում է իւր ջերմագին շնորհաւորութիւնները 25-ամեայ յոբելեանի առիթով. որոնց ցանկանում է ապագայ բարգաւաճումը ի՛ յաւիտենական յիշատակ հիմնադիրների, խրախոյս կառավարիչների, սփոփումն կարօտեալների և մեր ամենքիս բարեկեցութեան։

ՄՈՍԿՎԱ։ Ուսանող պ. Յակոբ Թադէոսեանին։ №-ները կ՚ուղարկուեն նոր հասցէով։

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ։ *Որպէս զի «Մուրճ»-ի բովանդակութեան հետ ծանօթանայ հասարակութեան այն մասը, ուր «Մուրճ»-ը դեռ ևս չէ թափանցել, այս համարով ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ»-ի չորս №-ների բովանդակութիւնը կրկին անգամ, յատուկ նպատակով, որ բովանդակութեան այդ թերթը մեր բաժանորդները տան իրանց ծանօթներին։ Խմբագրութիւնս կարծում է, որ բոլոր յայտարարութիւններից դա՝ լաւագոյն տեսակն է։*

*Նոր բաժանորդները կը ստանան բոլոր անցեալ համարները։*

ԺԸՆԵՒ. *պ. Ցոնան Դաւթեանցին։ Հասցէն ուղղեցինք։*

ՎԻԵՆՆԱ. *Խմբագրութեան «Հանդէս ամսօրեայ»-ի։ Պարոն Ց. Ջաթալըաչեանը մեզ հաղորդեց, որ «Մուրճ»-ի №-ները 2-ից սկսած ստացած չէք։ Պարտք ենք համարում յայտնել յարգոյ խմբագրութեանդ, որ «Մուրճ»-ի բոլոր №-ները Ձեզ ուղարկուած են, բայց միայն հասարակ բանդերօլով, որովհետև տարեկան ապահովագրով պօստատունը չի ընդունում արտասահմանի համար։ Դէպքը մեզ և զարմացնում է և վշտացնում։ Մենք այս անգամ ուղարկում ենք Ձեզ յիշեալ №-ները երկրորդ անգամ։*

ԲԱՔՈՒ. *պ. Խաչ. Մ. Դիլանեանցին։ Ստացանք 35 րուբլու ծրարը և յանձնեցինք ըստ հասցէին՝ Ա. Ք.-ին։*

ԹԻՖԼԻՍ. *պ. Ղ. Աղայեանցին։ Ձեր յոյսը, որ «Մուրճ»-ը ևս իւր կողմից մէկին կը յանձնարարի հիւն և վեւ-ի մասին գրել, պիտի մնայ անկատար։ Մենք որ դիմենք մի խնդիրքով մէկին բան գրելու, մեր խնդիրքի առարկան կը լինի, օրինակի համար՝ պանդըխտութեան խնդիրը հայերիս մէջ, գիւղական դարդն ու ցաւերի վերաբերեալ մի խնդիր, հարկերը Անդրկովկասում, դպրոցական յառաջդիմութեան խնդիրը, իրերի դրութիւնը Թիւրքաց-Հայաստանում, նորագոյն բանաստեղծութիւնը մեզանում, հայ կնոջ դրութիւնը և նորա յառաջդիմութեան պայմանները, առևտուրը Երևանում, Բաքուում, Թիֆլիսում, Բաթումում, առևտրական կրիզիսները մեզանում, վիպասանութիւնը մեզանում, ուսուցչական ապահովութեան խնդիրը, գրող դասակարգի համար փոխատու-խնայողական կասսան, քրէական յանցանքները Անդրկովկասում, ղաչաղութիւնը մեր երկրում և այլն և այլն։ Ահա իրօք հարկաւոր, կենսական, հիւթալի խնդիրներ, բայց ի հարկէ, խնդիրներ, որոնք չեն կարող հետաքրքրել առհասարակ, ինչ կայ մեզանում, փտած-նեխուած շրջաններին։ (Ո՛չ անպատճառ անկիրթներին, օ՛ ոչ. ցաւը սա է, որ նեխուածներ կան մանա-*

*ւանդ մեր «ուսումնական» շրջանների մէջ!)։ Խնդրի վերաբերեալ գրուածներ մենք սիրով կ'ընդունենք, բայց միայն եթէ նոքա իրօք նորութիւն են յայտնում։ Եւ որովհետև մենք մեծ յոյսեր չ'ունինք, այդ պատճառով կարծում ենք, որ հիւն և վեւ-ի մասին գրականութիւնը, եթէ արդէն սպառւած չէ, շատ շուտով կը սպառուի։ Իսկ ով իրօք նոր բան ունի յայտնելու, նա կը գրէ առանց սպասելու որ խնդրեն։*

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. *պ. Շ.-ին։ Ստացանք Ձեր նամակը և 4 մարկան։ Թոյլտւութիւն ենք խնդրում, որ մի ամիս ևս յօդուածը մեզ մօտ մնայ, որովհետև ժամանակ չ'ունեցանք նորանով զբաղուելու։*

ԲԱՔՈՒ. *պ. Ա.-ին, Ձեր վէպիկը յանձնեցինք պ. Շիրվանզադէին։*

---

*Վրիպակներ։ Սոյն 6-դ №-ում, «Խև Կարապետ» վէպում պէտք է ուղղել հետևեալ տպագրական սխալները։*

| | | | | | տպուած է | ուղիղն է |
|---|---|---|---|---|---|---|
| Երես | 843 | 2-դ | տող | ներքևից՝ | ստեր | ստիր |
| | 855 | 18-դ | » | » | ու տարի | տարի |
| | 872 | 5-դ | » | » | Թանջիմաթից | Թանզիմաթից |
| | 876 | 8-դ | » | » | Կ. Պօլսում | Կարինում |
| | 877 | 5-դ | » | վերևից՝ | գ ի ր ք ը | գ ի ր կ ը |
| | 886 | 4-դ | » | ներքևից՝ | մասով | մասին |
| | 889 | 15-դ | » | վերևից՝ | Կ. Պօլիս | Կարին |
| | 892 | 14-դ | » | » | Մ.-ի | Մուշի |

*Անցեալ 5-դ №-ում, Կարա-Մուրզայի կենսագրութեան մէջ ասւած է (երես 822), թէ նորան ուղարկել են Իտալիա, ս. Ղազարի վանքը (Վենետիկ), մինչդեռ ճիշդը սա է, որ միայն մտադիր են եղել ուղարկելու նորան այնտեղ։*

*Անցեալ № 5-ում, «Ուղղագրութեան խնդիրը» յօդւածում, երես 818, 8-դ և 7-դ տողեր ներքևից՝ «որպէս և մեր հիւնը՝ երկու դէպքում խսկապէս ձայնաւոր է» խօսքերը սխալմամբ են տպւած, որպէս այդ պարզ երևում է նախադասութեան մոքից, որի հետ այդ խօսքերը բոլորովին չեն կապւում։*

## ՎԵՐՋԻՆ ԺԱՄԻՆ ՍՏԱՑԱՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ԵՐԿՈՒ ԳԻՐՔԸ.

ЗЕЛИНСКІЙ, Ст. П.—ОБЪЯСНИТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ Татарскихъ, грузинскихъ и армянскихъ словъ, вошедшихъ въ матеріалы по изуч. быта госуд. крестьянъ въ Закавк. краѣ. (Приложеніе къ своду).

ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՐ.—ԾԱՂԻԿ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԳԵՐ, *ժողովեց և հրատարակեց օր. Մարիամ Մակարեանց. Թիֆլիս. տպարան Մարտիրոսեանցի*, 1889 *Թ.*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ.